Հայոց 1114 թուականից (1665 թուին) Նոր-Ջուղայի բնակիչների թիւն յայտնում է 12.000 տուն կամ մօտ 150.000 բնակիչ, բայց այդ թիւն, ի հարկէ, միայն Նոր-Ջուղային չէ վերաբերում, այլ Սպահանում ու նրա մօտակայքում գտնուած բոլոր Հայերին. անկարելի է, որ միայն Նոր-Ջուղայում այդքան բնակիչներ լինէին, որովհետեւ Շարդէնը, որ նկարագրել է Նոր-Ջուղան գրեթէ նոյն ժամանակ (1665ին), ասում է, որ գաղթականութիւնից 6 տարի յետոյ (1611ին) բնակիչների թիւն հասաւ 5000ի։ Ուրեմն, եթէ 50—55 տարուայ ընթացքում բնակիչների թիւն դարձել է 12.000 տուն, պարզ է, որ դրա մէջ հաշուում են եւ Սպահանի ու շրջակայ գիւղերի Հայերին։ Մենք գիտենք եւրոպացի ուրիշ պատմագիրներից, որ Նոր-Ջուղան իր ամենածաղկած դրութեան ժամանակ 12.000 հոգի բնակիչ է ունեցել։ Միւս կողմից մենք գիտենք, որ գաղթականների կէսն հաղիւ հասաւ Պարսկաստան. այդ մասին բացի զանազան ստոյգ տեղեկութիւններից ունենք եւ մի ժամանակակից ձեռագիր յիշատակարան՝ Նոր-Ջուղայի Ս. Մինաս եկեղեցում։

"Եւ եթէ զմտաւ ածեմք՝ քան զկէսն մահուանէ ի կեանս փոխեցան առ Աստուած, ոմանք ջրախեղդ մեռան՝ ոմանք ի ցրտոյ պակասեցան եւ ոմանք աղգի աղգի մահուամբ առ Քրիստոս փոխեցան"[1]։

---

1 Պատմ. Նոր-Ջուղայու Ց. Թ. Տէր-Յովհաննեան, Նոր-Ջուղա, 1880թ.